Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2025թ. մայիսի 1-ի N 168-Ա
հրամանի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2024 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Ներքին աուդիտը հանրային հատվածում 4

Հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորներ 6

Հանրային հատվածի ներքին աուդիտի որակավորում եվ շարունակական մասնագիտական վերապատրաստում 10

Հանրային հատվածի մարմիններում իրականացված ներքին աուդիտ 12

Հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն 18

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հաշվետվությամբ ներկայացվում է 2024թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված ներքին աուդիտի վերաբերյալ վերլուծությունը: Մասնավորապես, ըստ համապատասխան բաժինների անդրադարձ է կատարվում հետևյալ թեմաներին.

1. **ներքին աուդիտը հանրային հատվածում**
2. **հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորներ**
3. **հանրային հատվածի ներքին աուդիտի որակավորում և շարունակական մասնագիտական վերապատրաստում**
4. **հանրային հատվածի մարմիններում իրականացված ներքին աուդիտ**
5. **հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:**

Սույն հաշվետվությունը ներկայացվում է ի կատարումն «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ

«Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին) հաշվետու տարում իրականացված ներքին աուդիտի վերաբերյալ տարեկան ամփոփ հաշվետվություններ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի թվով 46 մարմինների կողմից (տե՛ս Ցանկ N 1), այդ թվում 30 պետական և 7 տարածքային կառավարման մարմինների (այսուհետ՝ ՊՄ) և 9 տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) կողմից:

Ներքին աուդիտի ստորաբաժանում

Համաձայն Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների՝ ՀՀ հանրային հատվածի թվով 19 մարմիններում ներքին աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով.

- 14 պետական մարմիններ
- 5 տեղական ինքնակառավարման մարմիններ

Ներքին աուդիտի արտապատվիրակում

Համաձայն Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների՝ ՀՀ հանրային հատվածի թվով 27 մարմիններում ներքին աուդիտի աշխատանքների իրականացումը արտապատվիրակվել են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված՝ Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ Կազմակերպություններ (տե՛ս Ցանկ N 3))

- 16 պետական մարմիններ
- 7 տարածքային կառավարման մարմիններ
- 4 տեղական ինքնակառավարման մարմիններ

Ներքին աուդիտ չի իրականացվել

Ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ Լիազոր մարմին ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ներքին աուդիտ չի իրականացվել թվով 12 պետական մարմիններում (տե՛ս Ցանկ N 2), ինչը պայմանավորված է ներքին աուդիտի ստորաբաժանումների լուծարված լինելու պարագայում ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով մրցույթներ չկայանալու հանգամանքով կամ ներքին աուդիտի ստորաբաժանումների հաստիքները համալրված չլինելու հանգամանքով:

Արտապատվիրակում

27
մարմին

Ստորաբաժանում

19
մարմին

Չի իրականացվել

12
մարմին

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում Լիազոր մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով վարվել և ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել են «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը», «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը» և «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը» (այսուհետ՝ *Ցանկեր*): 31.12.2024թ. դրությամբ Ցանկերում ընդգրկված են 289 աուդիտորներ, որոնցից 93-ը, համաձայն Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների, հանրային հատվածի կազմակերպությունների աշխատողներ են հանդիսանում:

2024թ. ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում են ստացել 31 անձ:

Աղյուսակ 1. Հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց թվաքանակը

Որակավորումներ	**2023**	**2024**
ՀՀ ընդունելի միջազգայնորեն ճանաչված աուդիտորների որակավորում ունեցող անձիք	6	6
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձիք	229	260
ՀՀ ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձիք	23	23
Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպություններ	10	9

Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված աուդիտորների վերաբերյալ 2022-2024թթ.

համապատասխան ցուցանիշների դինամիկան արտացոլված է ստորև ներկայացված գրաֆիկում.

Գրաֆիկ 1. Հանրային հատվածի կազմակերպություններում աշխատող ներքին աուդիտորների թվաքանակը



2024թ.-ին 2022-2023թթ. համեմատությամբ փոփոխության է ենթարկվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը: Այսպես՝ 2024թ. գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը 2023թ. համեմատությամբ ավելացել է 14-ով կամ 17.7%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է՝ 1-ով կամ 25%-ով, միևնույն ժամանակ 2022թ. համեմատությամբ՝ գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը ավելացել է 18-ով կամ 24%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է 11-ով կամ 78.5%-ով:

ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2022-2024թթ., ներկայացված է ստորև:

Գրաֆիկ 2. Հանրային հատվածում աշխատող որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակի հարաբերակցությունը



ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 96 աուդիտորներից թվով 77-ը հանդիսանում են ՊՄ-ների, իսկ թվով 19-ը՝ ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատողներ:

2024թ. ՊՄ-ների աուդիտորների թիվը 2023թ. համեմատությամբ ավելացել է 10-ով, իսկ ՏԻՄ-երի աուդիտորների թվաքանակը՝ 3-ով, իսկ 2022թ. համեմատությամբ՝ ՊՄ-ների աուդիտորների թվաքանակը ավելացել է 5-ով, իսկ ՏԻՄ-երի աուդիտորների թվաքանակը՝ 2-ով:

Գրաֆիկ 3. ՊՄ-ներում և ՏԻՄ-երում ներքին աուդիտորների թվաքանակը



2024թ. տարեվերջին «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկված կազմակերպությունների թիվը 9 է: Նշված ցուցանիշը 2023թ. համեմատությամբ նվազել է 1-ով, իսկ 2023 թվականի ընթացքում հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկը չի փոխվել:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարի 28.12.2023թ. N 516-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի համաձայն՝ 2024թ. ընթացքում կազմակերպվել է թվով 12 որակավորման քննություն: Որակավորում ստանալու համար հաշվետու տարվա ընթացքում ստացվել են 82 հայտեր: Նշված ցուցանիշը 2023թ. համեմատությամբ ավելացել է 12-ով կամ 17.1%-ով: Քննությանը մասնակցելու համար հրավիրված թվով 82 դիմողներից որակավորման համար սահմանված շեմը հաղթահարել են թվով 31-ը, որոնց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և նրանք ներառվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող՝ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում:

2024թ. տարեվերջի դրությամբ առկա է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող Ցանկերում ընդգրկված թվով 289 աուդիտոր, որը նախորդ 2023թ. համեմատությամբ ավելացել է 31-ով կամ 12%- ով: Ստորև գրաֆիկում բերված են հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող և Ցանկերում ընդգրկվածության 2022-2024թթ. ամփոփ ցուցանիշները:

Գրաֆիկ 4. Հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց թվաքանակը



Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 28.12.2023թ. N 516-Ն հրամանով հաստատված նոր կարգի պահանջներով 2024թ. ընթացքում չեն իրականացվել ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

Համաձայն վերոնշյալ նոր կարգի ներքին աուդիտորը որակավորումն ստանալու տարվան հաջորդող յուրաքանչյուր երրորդ տարում պետք է անցնի վերապատրաստում, ընդ որում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը որակավորում ստացած ներքին աուդիտորների հաջորդ վերապատրաստման տարին է համարվում 2025 թվականը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Հաշվետու տարվա ավարտին՝ ՀՀ հանրային հատվածի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացված ներքին աուդիտի արդյունքների և ներքին աուդիտի աշխատանքների վերաբերյալ ստացված տարեկան ամփոփ հաշվետվությունների, ինչպես նաև հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 3-րդ՝ «Ներքին աուդիտի միջավայրի միավորները» աղյուսակի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2024թ. ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՊՄ-ների և ՏԻՄ-երի 2471 միավորից 758-ը կամ 30.7%-ը և 17901 գործառույթից 9045-ը կամ 50.5%-ը: Նշված ցուցանիշը 2023թ. համեմատությամբ աճել է՝ ըստ միավորների 3.0%-ով և ըստ գործառույթների՝ 15.5%-ով, իսկ 2022թ. համեմատությամբ՝ համապատասխանաբար 1.4%-ով և 13.7%-ով: 2024թ. փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ-ների և ՏԻՄ-երի 844 միավոր կամ 34.2%-ը և 8707 գործառույթ կամ 48.6%-ը: Նշված ցուցանիշը, 2023թ. համեմատությամբ աճել է ըստ միավորների 6.8%-ով և ըստ գործառույթների 14.4%-ով, իսկ 2022թ. Համեմատությամբ՝ համապատասխանաբար 4.9%-ով և 12.8%-ով:

Ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վերոհիշյալ ցուցանիշները ունեն հետևյալ պատկերը.

ՊՄ-ների 1695 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 666-ը կամ միավորների 39.3%-ը և 14558 գործառույթից՝ 8086-ը կամ 55.5%-ը, 2023թ. պլանավորված միավորների 31.4%-ի և գործառույթների 35.8%-ի դիմաց, իսկ 2022թ., համապատասխանաբար 34.1%-ի և 40.8%-ի դիմաց: 2024թ. փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ-ների 755 միավոր կամ 44.5% և 7763 գործառույթ կամ 53.3%, 2023թ.՝ միավորների 30.9%-ը և գործառույթների 34.9 %-ը, իսկ 2022թ.՝ միավորների 34.4%-ը, գործառույթների 39.7%-ը:

Միևնույն ժամանակ ՏԻՄ-երի գծով հաշվետու տարում պլանավորվել է 776 միավորներից աուդիտի ենթարկել 92 միավոր կամ միավորների 11.9%-ը և 3343 գործառույթից՝ 959-ը կամ 28.7%-ը, 2023թ.՝ միավորների 15.9%-ը և գործառույթների 30.3%,

2022թ. համապատասխանաբար 15.7%-ը և 18.1%-ը: Փաստացի աուդիտի է ենթարկվել 89 միավոր կամ դրանց 11.5%-ը և 944 գործառույթ կամ 28.2%-ը, 2023թ. միավորների 16.4%-ի և գործառույթների 30.8%-ի, 2022թ. համապատասխանաբար 14.8%-ի և 17.0%-ի դիմաց:

Համադրելով այս ցուցանիշները ստացվում է, որ 2024թ. ՊՄ-ների և ՏԻՄ-երի փաստացի կատարողականն ըստ միավորների կազմել է 111.3%, իսկ ըստ գործառույթների՝ 96.3%, 2023թ. համապատասխանաբար 98.9%-ի և 97.9%-ի, իսկ 2022թ.՝ 100%-ի և 97.1%-ի դիմաց:

Փաստացի կատարողականի ցուցանիշը ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետևյալն է.

ՊՄ-ների դեպքում ըստ միավորների 2024թ. կազմել է 113.4%, իսկ 2023թ. և 2022թ. համապատասխանաբար 98.3% և 97.3%, ըստ գործառույթների՝ 2024թ.՝ 96.0%, 2023թ.՝ 97.4%, 2022թ.՝ 97.5%:

ՏԻՄ-երի դեպքում ըստ միավորների 2024թ. կազմել է 96.7%, 2023թ.՝ 103%, 2022թ.՝ 93.9%, ըստ գործառույթների՝ 2024թ.՝ 98.4%, 2023թ.՝ 101.3%, 2022թ.՝ 93.8%:

Գրաֆիկ 5. 2024թ. ՊՄ-ների և ՏԻՄ-երի փաստացի կատարողականն ըստ միավորների և ըստ գործառույթների





2024թ. տարեկան ծրագրով պլանավորված թվով 783 առաջադրանքից 777-ը պլանավորվել է որպես աուդիտորական, իսկ 6-ը՝ խորհրդատվական ծառայություն

մատուցելու առաջադրանքներ, նույն ցուցանիշները համապատասխանաբար 2023թ. կազմել են՝ 1046 առաջադրանքից 977-ը աուդիտորական, իսկ 69-ը՝ խորհրդատվական ծառայություն մատուցելու համար, նույն ցուցանիշները համապատասխանաբար 2022թ. կազմել են 971 և 76: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2024թ. 688 և 4 առաջադրանք, 2023թ.՝ 849 և 67 առաջադրանք, 2022թ.՝ 832 և 76 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2024թ.՝ 89 և 2, 2023թ.՝ 128 և 2 առաջադրանք, 2022թ.՝ միայն աուդիտորական 139:

Համաձայն տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների՝ փաստացի իրականացված առաջադրանքների քանակը 2024թ. կազմել է 853 առաջադրանք, 2023թ. 1260 առաջադրանք, 2022 թվականին՝ 1341, որը 2023թ. համեմատությամբ նվազել է 32.3%-ով, իսկ 2022թ. համեմատությամբ՝ 36.37%-ով: Նշված ցուցանիշը 2024թ. ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 685, 2023 թվականին ՝ 1125, 2022 թվականին՝ 1209 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2024թ.՝ 87, 2023թ.՝ 135, 2022 թվականին՝ 132 առաջադրանք:

Համաձայն նույն աղյուսակով ներկայացված տվյալների՝ 2024թ. իրականացվել է լրացուցիչ (ոչ պլանային) թվով 70 աուդիտորական առաջադրանք. գերակատարումը կազմել է 8.94%: 2023թ. նման 75 աուդիտորական առաջադրանք. գերակատարումը կազմել է 7.7%: 2024թ. իրականացված լրացուցիչ թվով 70 աուդիտորական առաջադրանքներից 69-ը իրականացվել են ՊՄ-ներում, իսկ 1-ը ՏԻՄ-երում:

2024թ. մատուցվել է 81 խորհրդատվական ծառայություն, համապատասխանաբար 2022 և 2021թթ. 139 և 174 խորհրդատվական ծառայության փոխարեն: Խորհրդատվական ծառայությունները ինչպես 2024թ., այնպես էլ 2022-2023թթ. գերակատարվել են:

Համաձայն 2024թ. տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 4-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների» աղյուսակի՝ ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքները, ըստ աուդիտի տեսակների, ունեն ստորև ներկայացված պատկերը.

Գրաֆիկ 6. 2024թ. ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտի տեսակներն



	1	2	3	4	5	6
■ ՏԻՄ	480	5	27	0	46	2
■ ՊՄ	365	31	51	2	208	28

1 - Համակարգի գնահատման աուդիտ
2 - Կատարողականի աուդիտ
3 - Ֆինանսական աուդիտ
4 - Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ
5 - Համապատասխանության կամ իրավական աուդիտ
6 - Գնումների աուդիտ

2024թ. իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակները 2023թ. համեմատությամբ նվազել են 409-ով, իսկ 2022թ.համեմատությամբ՝ նվազել 533-ով: Այսպես, համակարգի գնահատման աուդիտի քանակը 2023թ. համեմատ նվազել է 22.5%-ով, իսկ 2022թ. համեմատ՝ 7.23%-ով, ֆինանսական աուդիտի քանակը համապատասխանաբար նվազել է շուրջ 6.02%-ով կամ 1.06 անգամ, համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակը 2023թ. համեմատությամբ նվազել է 20.9%-ով, իսկ 2022թ. համեմատությամբ 15.9%-ով , կատարողականի աուդիտի քանակը 2023թ. համեմատությամբ նվազել է 32.08%-ով, իսկ 2022թ. Համեմատ՝ նվազել 55.56%-ով կամ 0.44 անգամ: 2024թ. իրականացվել է 2 տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ, 2021-2023թթ. չի իրականացվել աուդիտի տվյալ տեսակը:

2024թ. ընթացքում իրականացված գնումների թվով 30 աուդիտներից՝ 14-ը կամ 46.67%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 15-ը կամ 50%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող և 1-

ը կամ 3.33%-ը՝ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման աուդիտն է:

Ստորև գրաֆիկում ներկայացված են հանրային հատվածի մարմիններում փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2022-2024թթ. ամփոփ ցուցանիշները.

Գրաֆիկ 7. Հանրային հատվածի մարմիններում փաստացի իրականացված աուդիտի տեսակներն 2022-2024թթ.



Համաձայն ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության արդյունքների՝ 2024թ. գնման գործընթացի աուդիտ է իրականացվել նաև աուդիտի մնացած տեսակների շրջանակներում՝ ինչպես գնման ընթացակարգերի, այնպես էլ պայմանագրի կատարման մասով, փաստացի ուսումասիրվել է թվով 1267 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 1018 գործառույթ, իսկ ՏԻՄ-երում՝ 249 գործառույթ, որից գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող՝ 249, այդ թվում՝ ՊՄ-ներում 222, իսկ ՏԻՄ-

երում՝ 27, գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող՝ 1016 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 989, իսկ ՏԻՄ-երում՝ 27, պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումներ՝ 2, այդ թվում՝ ՊՄ-ներում՝ 2, իսկ ՏԻՄ-երում չեն ուսումնասիրվել նման գործառույթներ:

2024թ. նվազել է ներքին աուդիտի կողմից արձանագրված անհամապատասխանությունների քանակը, մասնավորապես, նախորդ տարվա արձանագրված 5854 անհամապատասխանության փոխարեն հաշվետու տարում արձանագրվել է թվով 3945 անհամապատասխանություն, որից ՊՄ-ներում՝ 3408 և ՏԻՄ-երում 537՝ նվազելով 32.6%-ով: Նշված ցուցանիշը 2023թ. համեմատությամբ ՊՄ-ներում նվազել է 1382-ով կամ 28.9%-ով, իսկ ՏԻՄ-երում՝ 527-ով կամ 49.5%-ով: 2024թ. 66.4%-ով նվազել է աուդիտորական առաջադրանքների արդյունքներով արձանագրված և իրավապահ մարմիններին փոխանցված անհամապատասխանությունների քանակը՝ հասնելով 41-ի, նախորդ տարվա 122-ի փոխարեն:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ[1]

Հավելված 10
ՀՀ ֆինանսների նախարարի
17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2024	2023	2022
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3.76	3.69	3.5
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3.82	3.76	3.66

2. Ներքին աուդիտորներ

N	Նկարագիր	2024	2023	2022
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը[2], այդ թվում՝	171	192	199

[1] Աղյուսակները կազմված են բացառապես ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա՝ ստացված ինչպես կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով ներքին աուդիտն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այնպես էլ ներքին աուդիտի իրականացման աշխատանքները Կազմակերպություններին արտապատվիրակած մարմիններից և համայնքներից: Ընդ որում 2023թ. հաշվետվություն է ներկայացվել հանրային հատվածի թվով 50 մարմինների կողմից՝ 38 ՊՄ և 12 ՏԻՄ, իսկ 2022թ. հանրային հատվածի թվով 55 մարմինների կողմից՝ 43 ՊՄ և 12 ՏԻՄ:

[2] Նշված ցուցանիշը ներառում է ինչպես ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողներին, այնպես էլ կազմակերպությունների աշխատողներին, ովքեր ընդգրկված են եղել ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի աշխատանքներում:

1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	168	187	183
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը	3	5	16

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2024	2023	2022
1)	Կազմակերպության միավորների քանակ	2471	3443	3239
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	17901	23630	17467
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	758	953	949
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	9045	8272	6432
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	844	943	949
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	8707	8100	6248

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները[3]	2024	2023	2022
1)	Համակարգի գնահատման աուդիտ*	372	480	401
2)	Կատարողականի աուդիտ*	36	53	81
3)	Ֆինանսական աուդիտ*	78	83	269
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	2		0
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ *	254	321	302
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝	30	234	209
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	14	48	77

[3] *-ով նշված աուդիտի տեսակների շրջանակներում իրականացվել է նաև գնումների աուդիտ:

6.1.1)	Գնման ընթացակարգի մասով	*11*	*30*	*46*
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով	*3*	*18*	*31*
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	15	185	130
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով	*11*	*48*	*71*
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով	*4*	*137*	*59*
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	1	1	2
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	*1*	*1*	*2*
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	*0*	*0*	*0*
7)	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	55	60	83
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	26	25	22
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	0	0	2
10)	Այլ	0	6	17
11)	Ընդամենը	853	1262	1386

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2024	2023	2022
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	783	1046	1047
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	777	977	971
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	6	69	76
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	853	1262	1386
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	772	1171	1262
2.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	81	91	124

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	2024	2023	2022
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	3945	5854	5109
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	2211	3718	3795
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	1734	2136	1314
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	3563	4826	4279
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	3632	5497	4569
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	1929	3561	1540
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	5	123	298
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	178	85	201
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	1520	1728	2530
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	3874	4763	4064
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	41	122	227
4.2)	Ինքնուրույն կանխված	3833	4641	3837

ՑԱՆԿ N 1

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ստորաբաժանման միջոցով ներքին աուդիտ իրականացրած մարմիններ

Նախարարություններ

1) ՀՀ արտաքին գործերի նախարարություն
2) ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն
3) ՀՀ պաշտպանության նախարարություն

Վարչապետին ենթակա մարմիններ

4) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
5) ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Կառավարությանը ենթակա մարմիններ

6) ՀՀ պետական եկամուտների կոմիտե
7) ՀՀ վիճակագրական կոմիտե

Այլ մարմիններ

8) ՀՀ Ազգային ժողով
9) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
10) ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
11) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե
12) ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդ
13) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
14) ՀՀ սահմանադրական դատարան

Տեղական ինքնակառավարման մարմիններ

15) Երևանի քաղաքապետարան

16) Գորիսի համայնքապետարան

17) Կապանի համայնքապետարան

18) Չարենցավանի համայնքապետարան

19) Վանաձորի համայնքապետարան

Արտապատվիրակման միջոցով ներքին աուդիտ իրականացրած մարմիններ

Նախարարություններ

20) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

21) ՀՀ առողջապահության նախարարություն

22) ՀՀ արդարադատության նախարարություն

23) ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

24) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Կառավարությանը ենթակա մարմիններ

25) ՀՀ կադաստրի կոմիտե

26) ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե

Այլ մարմիններ

27) ՀՀ բարձրագույն դատական խորհուրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ

28) ՀՀ գլխավոր դատախազություն

29) ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով

30) ՀՀ միասնական սոցիալական ծառայություն

31) ՀՀ մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

32) ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե

33) ՀՀ ջրային կոմիտե

34) ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե

35) ՀՀ քննչական կոմիտե

Մարզպետարաններ

36) ՀՀ Արագածոտնի մարզպետարան

37) ՀՀ Արարատի մարզպետարան

38) ՀՀ Արմավիրի մարզպետարան

39) ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

40) ՀՀ Լոռու մարզպետարան

41) ՀՀ Շիրակի մարզպետարան

42) ՀՀ Տավուշի մարզպետարան

Տեղական ինքնակառավարման մարմիններ

43) Ապարանի համայնքապետարան

44) Նաիրիի համայնքապետարան

45) Սիսիանի համայնքապետարան

46) Տեղի համայնքապետարան

ՑԱՆԿ N 2

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՈՐՏԵՂ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Նախարարություններ

1) ՀՀ ներքին գործերի նախարարություն
2) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
3) ՀՀ ֆինանսների նախարարություն
4) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Վարչապետին ենթակա մարմիններ

5) ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն
6) ՀՀ պետական պահպանության ծառայություն

Կառավարությանը ենթակա մարմիններ

7) ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Այլ մարմիններ

8) ՀՀ նախագահի աշխատակազմ
9) ՀՀ վարչապետի աշխատակազմ

Մարզպետարաններ

10) ՀՀ Կոտայքի մարզպետարան
11) ՀՀ Սյունիքի մարզպետարան
12) ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

ՑԱՆԿ N 3

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
2) «ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
3) «ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ
4) «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
5) «ՖՈՐ ԷՅ ՔՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ
6) «ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ
7) «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
8) «ՊՐՈՖ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
9) «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
10) «ՕՐԵՆՔ ԵՎ ԿԱՐԳ» ՍՊԸ[4]

[4] «Օրենք և Կարգ» ՍՊԸ-ի տվյալները 12/12/2024 թվականից դուրս են բերվել ՀՀ հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկից՝ սեփական դիմումի համաձայն